

ԱԳՐԱԿԱՆ ԼՐԱՄՈՒԼ

ՀՈՒՆԻՍ 25 - ՀՈՒՆԻՍ 5 2016 թ. Թիվ 16 (2104) ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Գյուղատնտեսական եռուզեռ Արմավիրի մարզում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք՝ բանջարաբուստանային մշակաբույսերի բերքահավաքի ընթացքին հետևելու նպատակով: Նախարարին ուղեկցում էր Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը:

«Արարատյան դաշտավայրում պտուղ-բանջարեղենի բերքահավաքի եռուն շրջանը մեկնակել է, ինչի արդյունքում Ներքին շուկայում արդեն զգալի գնանկում է նկատվում: Հունիսի 30-ին Եղեգնուտում հավաքել են ձմերուկի առաջին բերքը, մի քանի օր առաջ սմբուկի բերքահավաք է կատարվել: Մեր տվյալներով, չնայած գարնանը գրանցված կարկտահարության և ցրտահարության դեպքերին, Արմավիրի մարզում, ընդհանուր առմամբ, բավականին լավ բերք է սպասվում», - նշել է Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով մարզի գյուղատնտեսության ոլորտում վերջին տարիներին արձանագրված հաջողություններին՝ նախարարը գոհունակությամբ նշել է, որ այստեղ բավականին լուրջ աշխատանքներ են տարվել, և Ներկայումս մշակվող հողերը կազմում են ընդհանուր վարելահողերի շուրջ 86 %-ը կամ 35770 հեկտար:

Նախարարն ընդգծել է, որ պտուղ-բանջարեղենի մշակության արմավիրցի շատ ֆերմերների փորձն արժանի է ընդօրինակման, այստեղ հստակորեն պահպանվում են ագրոտեխնիկայի կանոնները, ինչի շնորհիվ տարեցտարի ավելանում են բերքատվությունն ու արտադրության ծավալները:

Մարզպետ Աշոտ Ղահրամանյանն իր հերթին նշել է, որ Արմավիրում արդեն մեկնարկել է ծիրանի, պղպեղի, ձմերուկի և սմբուկի բերքահավաքը: Նրա խոսքով՝ մարզում ընթացիկ տարում, նախորդ տարվա համեմատ, մշակվել է շուրջ 1700 հեկտարով ավել հողատարածք, ինչը թույլ է տալիս ակնկալել բանջարաբուստանային մշակաբույսերի 40-45 հազար տոննայով ավել բերք: Մարզպետը հավելել է, որ սմբուկի և ձմերուկի բերքի գերակշիռ մասն իրացվում է տեղական շուկայում և արտահանվում Վրաստան:

Եղեգնուտ համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանը նշել է, որ իրենց համայնքում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում են շուրջ 1300 հեկտար, որի գրեթե կեսը հատկացվում է բանջարաբուստանային մշակաբույսերին: Եղեգնուտը հատկապես հայտնի է ձմերուկի և սմբուկի մշակությամբ, այս տարի նույնպես այդ մշակաբույսերի մասով բարձր բերք են ակնկալում:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ջերմատնային և ջերմոցային տնտեսության վիճակն ու զարգացման ընթացքը

«168 ժամ» պարբերականի ս.թ. հունիսի 28-ի համարում տեղ գտած լուրիկի արտադրությանը և արտահանմանն առնչվող հրապարակման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Ջերմատների և ջերմոցների (փակ գրունտի) հիմնական խնդիրներն են՝ բանջարեղենի և ծաղիկների արտադրության սեզոնայնության մեղմելը (երբ բաց գրունտում դրանց արտադրությունը հնարավոր չէ), հյուսիսային և լեռնային շրջաններում ջերմաստիճանի բանջարեղենի աճեցմանը նպաստելը և բաց գրունտի մշակության համար սածիլների աճեցման ապահովումը:

Օպերատիվ տվյալների համաձայն՝ 2011 թվականին հանրապետության տարածքում շահագործվում էր ավելի քան 510 հա ջերմատուն և ջերմոց, որից՝ նորագույն տեխնոլոգիաներով 1.9 հա՝ ՀՀ Կոտայքի մարզում: 2016 թվականի հունիսի 28-ի դրությամբ, ջերմատների և ջերմոցների ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 1220.8 հա, որից ապակեպատ՝ 310 հա, թաղանթապատ՝ 910 հա: Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ջերմատների ընդհանուր տարածքը կազմում է ավելի քան 101 հա, այդ թվում՝ 59.4 հա Կոտայքի, 2.2 հա՝ Արմավիրի և 39.4 հա՝ Արարատի մարզերում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարության կողմից խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության և զարգացման ծրագրերի իրականացման նպատակով, գործադիրի որոշմամբ ստեղծվել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ: Որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի խաղողագործության և գինեգործության ոլորտներում արձանագրված հաջողություններն ամրապնդելու և զարգացման հետագա ընթացքն ապահովելու անհրաժեշտությամբ: Ըստ հիմնադրման՝ կառավարության կողմից որդեգրվել և իրականացվում է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն, իսկ գինեգործական արտադրանքը Հայաստանից արտահանվող սննդամթերքի հիմնական տեսակներից է և ունի ծավալային աճի մեծ ներուժ: Այդ պատճառով, այդ թվում նաև վերը նշված քաղաքականության շրջանակում, անհրաժեշտ է շարունակել ոլորտների զարգացումն ապահովող միջոցառումների իրականացումը: Հիմնադրմանը կգործի պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքով և հետամուտ կլինի բարձրորակ և միջազգայնորեն մրցունակ արտադրանքի արտադրության, ներքին և արտաքին շուկաներում հայկական գինու վարկանիշի բարձրացման աջակցությանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Ակնկալվում է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը կհանդիսանա կառավարության մոտեցումներն ու ոլորտում իրականացվող պետական քաղաքականության սկզբունքները կյանքի կոչող կառույց ու կհամախմբի այն բոլոր օղակների ջանքերը, որոնք ուղղված կլինեն իրականացնելու գինեգործության ռազմավարությունով ամրագրված զարգացման ծրագրերը: Վարչապետ Աբրահամյանը կարևորելով որոշման ընդունումը՝ ընդգծել է, որ հիմնադրամի գործունեությունից լուրջ արդյունքներ է ակնկալում:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը վերջերս աշխատանքային այց է կատարել ՀՀ Արարատի մարզ: Կառավարության ղեկավարը եղել է Արտաշատի տարածաշրջանի մի շարք համայնքներում: Մասնավորապես, Ներքին Դվին և Այգեգարդ համայնքներում Հովիկ Աբրահամյանը հետևել է ծիրանի բերքահավաքի ընթացքին, ապա հանդիպել Ներքին Դվին, Յնաբերդ, Այգեգարդ և Վերին Արտաշատ համայնքների բնակիչներին, լսել նրանց հուզող հարցերը: Գյուղացիները նախ գոհունակությամբ նշել են, որ իրենց համայնքներում բավականին խնդիրներ լուծում են ստացել. վերացել է ոռոգման ջրի խնդիրը, վերանորոգվել են համայնքների սոցիալական ենթակառուցվածքները: Այնուհետև համայնքների բնակիչները ներկայացրել են առաջնահերթ լուծում պահանջող մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում էին հակակարկտային կայանների ավելացմանը, համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաև նախորդ տարի խաղողի մթերման գումարների վճարմանը: Որոշ հարցերի լուծման, մասնավորապես, հակակարկտային լրացուցիչ կայանների տեղադրման առնչությամբ, վարչապետը տեղում հանձնարարականներ է տվել պատասխանատուներին, ինչպես նաև նշել, որ կառավարությունը կքննարկի և կփորձի հնարավորության սահմաններում լուծում տալ բարձրացված մյուս հարցերին ևս: Հովիկ Աբրահամյանը նաև տեղեկացրել է, որ նշված համայնքների ենթակառուցվածքների բարելավումն արդեն իսկ նախատեսված է ՀՀ կառավարության հաջորդ տարվա ծրագրերով:

Վարչապետը գոհունակությամբ նշել է, որ այսօր ծիրանի բերքի իրացման խնդիր չկա, մարդիկ նաև գալիս և դաշտից են գնում ծիրանը՝ գյուղացիներին ազատելով լրացուցիչ ծախսերից: Հովիկ Աբրահամյանը կարևորել է այն փաստը, որ նշված համայնքներում ոռոգման ջրի խնդիր այլևս չկա, և այժմ արդեն պետք է նախապատրաստվել խաղողի բերքի ընդունմանը, կազմակերպել, որպեսզի բոլոր վերամշակող գործարանները կարողանան ժամանակին բերքն ընդունել:

Կոոպերացիա	Էջ 4
Ռեսուրս	Էջ 6
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1



ՍՊՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ
ՊՐԵՍՍԱԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԸ
WWW.WAPOR.AM

Անդրադառնալով Նախորդ տարի խաղողի մթերման գումարների վճարման գործընթացում առկա դժվարություններին՝ կառավարության ղեկավարը նշել է, որ համայնքների բնակիչների դժգոհությունը հիմնավոր է, բայց վերամշակող գործարանները նույնպես օբյեկտիվ խնդիրներ ունեն, քանի որ ապրանքի իրացման դժվարություններ կան: Վարչապետն ընդգծել է, որ կառավարությունը շարունակաբար զբաղվում է այդ խնդրով, անհրաժեշտության դեպքում ևս մեկ անգամ կքննարկի և կփորձի աջակցել գործարաններին, բայց կա կազմված ժամանակացույց, և վերամշակող գործարանների ներկայացուցիչները խոստացել են մինչև օգոստոս վճարել բոլոր պարտքերը:

Վարչապետ Արարատյանի այցը եզրափակվել է Արարատի մարզպետարանում Արտաշատի տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ խորհրդակցությամբ, որի ընթացքում քննարկվել են համայնքների զարգացման ծրագրերը և հետագա անելիքները:

Գործադիրի մեկ այլ որոշմամբ գումար կհատկացվի 33 գյուղատնտեսության Նախարարությանը՝ Արարատի մարզի 3 նաբերդ համայնքում հողերի մշակության և գյուղատնտեսական աշխատանքների լիարժեք կազմակերպումն ապահովելու նպատակով, գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար: Հիմնավորման համաձայն՝ համայնքի գյուղատնտեսական տեխնիկական ֆիզիկապես մշակված է, հաճախակի խափանման պատճառով, գյուղատնտեսական աշխատանքները ևս լիարժեք չեն իրականացվում և վարելահողերի զգալի մասը չի մշակվում: Ընդունված որոշումը հնարավորություն կընձեռնի ցանքաշրջանառության մեջ ընդգրկել համայնքի չօգտագործվող վարելահողերը, մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում կիրառվող ագրոտեխնիկական աշխատանքներն իրականացնել որակով, ինչն էլ իր հերթին կնպաստի բերքատվության բարձրացմանը:

ՀՐԱԳՐԱԿՈՒՄ

Ջերմատնային և ջերմոցային տնտեսության վիճակն ու զարգացման ընթացքը

Ջերմատներում աճեցվում են լոլիկ, վարունգ, պղպեղ, սմբուկ, ամսաբողկ, լոբի, տարբեր կանաչիներ, կարտոֆիլ, ելակ, ծաղիկներ և այլն:

Հունիսի 28-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ջերմատնային տնտեսություններում լոլիկի տարածքներն, ըստ օպերատիվ տվյալների, կազմում են շուրջ 475 հա, որից՝ ավանդական տեխնոլոգիաներով՝ 434 հա, մեկ քառակուսի մետրի բերքատվությունը տատանվում է 8-20 կիլոգրամ, իսկ շուրջ 41 հա ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ՝ 40-50 կիլոգրամի սահմաններում: Ջերմատներում տարեկան արտադրվում է 97000-100000 տոննա լոլիկ: Նոր կառուցված բոլոր ջերմատները հիմնականում հագեցած են եվրոպական երկրների արտադրության նորագույն տեխնոլոգիական սարքավորումներով ու ավտոմատացված կառավարման համակարգերով և բույսի աճեցման տեխնոլոգիական բոլոր շրջափուլերը (ջեռուցում, պարարտացում, ածխաթթու գազով մերստացում, հնարավոր հիվանդությունների կանխարգելում և այլն) և այլ գործընթացները կառավարվում են ավտոմատացված համակարգերի միջոցով, որը գրեթե լիովին բացառում է մարդկային գործունի անհրաժեշտությունը: Բացի այդ, արտադրության կարևոր փուլերն իրականացվում են արտերկրի բարձրակարգ մասնագետների վերահսկողության ներքո: Վերը նշված բոլոր միջոցառումների արդյունքում զգալիորեն ավելանում է բերքատվությունը, նվազում արտադրանքի ինքնարժեքը, ինչպես նաև ապահովվում է բարձրակարգ ապրանքային տեսքով և որակով արտադրանք:

Հատկապես վերջին տարիներին տնտեսավարողների մոտ լուրջ շահագրգռվածություն է նկատվում ջերմատնային տնտեսությունների կառուցման և վերակառուցման ուղղությամբ: Ըստ նախնական կանխատեսումների, այս տարի շահագործման կհանձնվեն շուրջ 50 հա ժամանակակից տեխնոլոգիաներով ջերմատներ:

Ջերմատնային տնտեսության զարգացման արդյունքում, Նախորդ տարվա զարնանից հանրապետության շուկաներում իրացվել է հիմնականում բարձրորակ տեղական արտադրության լոլիկ, վարունգ, ամսաբողկ, ելակ և տարբեր տեսակի ծաղիկներ: Կտրուկ ավելացել են դրանց արտահանման ծավալները:

Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ ԱՎԾ տվյալների, 2015 թվականին լոլիկի ցանքատարածությունները (բաց գրունտ) կազմել են 7401 հա, համախառն բերքի ծավալը՝ 320183 տոննա, իսկ 2016 թվականին՝ օպերատիվ տվյալներով, լոլիկի ցանքերը կազմում են 7900-8000 հա:

33 զև տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ԲՆՆԱՐԿՈՒՄ

Նոր հնարավորություններ՝ մթերողների, վերամշակողների և արտահանողների համար

Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» և «Յեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող Գյուղի շարգացման Արդի Նախաձեռնություն (ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում կկազմակերպեն կլոր սեղան-քննարկում՝ «Գյուղական բիզնեսների կապը մթերողների, վերամշակողների, արտահանողների հետ» թեմայով:



Միջոցառմանը հրավիրված էին 33 գյուղատնտեսության Նախարարության և ԳԲԱԾԻԳ ՊՅ-ի, ԱՐԴԻ ծրագրի շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ, գյուղատնտեսական մթերք արտադրողներ, կոոպերատիվների անդամներ, բիզնեսի ներկայացուցիչներ Հայաստանի տարբեր գյուղական համայնքներից, ինչպես նաև՝ ԱՄՆ ՄԶԳ աշխատակիցներ:

Ներկաներին ողջունեց 33 գյուղատնտեսության փոխնախարար Ա. Հարությունյանը և ներկայացրեց զեկույց՝ «Գյուղատնտեսության Նախարարության գործնական քայլերը՝ գյուղատնտեսական մթերքների արտադրողների հետ փոխշահավետ համագործակցության տեսանկյունից» թեմայով: Փոխնախարարը ներկաների հետ քննարկեց նաև հարցեր, որոնք վերաբերում էին գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնական շուկաներին՝ երկրի ներսում և արտերկրում, կաթի և կաթնամթերքի, մրգի և բանջարեղենի արտադրության և իրացման իրավիճակներին: Մանրամասն ներկայացվեց նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) համագործակցության հնարավորությունները, քաղաքականությունը և միության անդամակցության հնարավորությունները փոքր արտադրողների համար: Այնուհետև գյուղատնտեսական ծրագրերի մասին խոսեց 33 զև «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության գրասենյակ» («ԳԾԻԳ» ՊՅ)-ի տնօրեն Գ. Խաչատրյանը և կարծիքների փոխանակման ընթացքում նշեց, որ արտադրության ոլորտում անհրաժեշտ է կիրառել նոր մեթոդներ՝ որակը բարելավելու ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում հիմնական զեկույցի վերաբերյալ հնչեցին բազմաթիվ կարծիքներ, հարց ու պատասխանների միջոցով քննարկումն ամփոփվեց: Կլոր սեղան-քննարկման արդյունքում ամփոփված և փաստաթղթավորված առաջարկություններ կներկայացվեն 33 կառավարությանը (ՏԻՄ և ազգային) և դոկոր կառույցներին:

Հիշեցնենք, որ ԱՐԴԻ-ն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2013 թվականին և միտված է Հայաստանում գյուղական համայնքների զարգացմանը: Ծրագիրն իրականացնում են Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» և «Յեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղը: Ծրագրի նպատակն է՝ Սյունիքի, Վայոց ձորի և Լոռու մարզերի գյուղական համայնքներում խթանել գյուղական զբաղվածությունը՝ տնտեսական զարգացման խոչընդոտները վերացնելու ճանապարհով: Ծրագիրն աջակցություն է տրամադրում գյուղատնտեսության երեք հիմնական արժեքներում՝ կաթի վերամշակում, մրգերի վերամշակում և գյուղական զբոսաշրջություն: Համայնքների տնտեսական զարգացման բաղադրիչը խթանում է համայնքների տնտեսության և ձեռներեցության զարգացման բնագավառում հաջողված փորձի և մեթոդաբանությունների կիրառությունը՝ հետևյալ նպատակների թիրախավորման միջոցով՝ համայնքների մրցակցային առավելությունների բացահայտում և խթանում, շուկաների հասանելիության խթանում, ձեռնարկատիրության և արդյունավետ կառավարման խթանում:



ԱՐԴԻ-ն ներկայացնում է յուրաքանչյուր համայնքի համար առավել հեռանկարային արժեքները և առկա խնդիրները: Իսկ գնահատման արդյունքների հիման վրա համայնքները մշակում են գործողությունների պլաններ՝ խոչընդոտների վերացման նպատակով:

Լիանա Շախնազարյան

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ճ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի հրամանով անտառների խոտածածկ տարածքներում հրդեհների կանխարգելման, ինչպես նաև անտառային հրդեհների առաջացման հնարավոր ռիսկերը մեղմելու նպատակով, հանձնարարվել է «Հայաստան» ՊՈԱԿ-ի բոլոր մասնաճյուղերին թույլատրել հանրապետության բոլոր գյուղացիական տնտեսություններին անտառների խոտածածկ տարածքներում, առանց արգելքի, անվճար իրականացնել խոտհնձի աշխատանքներ:

Մինևույն ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կոչ է անում ազգաբնակչությանը՝ խոտհնձի աշխատանքներն իրականացնելիս խստիվ պահպանել անվտանգության կանոնները՝ հիշեցնելով, որ արգելվում է անտառային տարածքներում 1/Կրակ վառել 2/ Վառվող լուցկի կամ ծխախոտի մնացորդ զցել 3/ Յուղեղով կամ բենզոլի ներծծված լաթեր թողնել Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գործող

օրենսդրությամբ քրեական և առանձնապես խոշոր չափերի հասնող նյութական պատասխանատվություն է սահմանված ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզուշտությամբ անտառային տարածքներին վնաս պատճառելու համար:

Թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման նպատակով, 55 բեռնատարներով բարձրագույն լաստանավը Փոթի նավահանգստից արդեն

ուղևորվել է դեպի Նովոռոսիյսկ:

Բեռնափոխադրումները շարունակվում են, դրանք իրականացվում են երկօրյա պարբերականությամբ, երկու ուղղություններով:

Հիշեցնենք, որ Վերին Լարսի անցակետի փակման պատճառով «Սպայկա» ընկերությունը վարձակալել է երեք լաստանավ՝ հայկական պտուղ-բանջարեղենի արտահանումն իրականացնելու նպատակով:

Պտուղ-բանջարեղենի արտահանումների գործընթացն անխափան իրականացնելու նպատակով, ՀՀ գյուղատնտեսության

նախարարությունն առաջարկում է արտահանողներին այս ընթացքում օգտվել վերոնշյալ այլընտրանքային ուղուց, որը շուրջ 300 կմ-ով կրճատում է ընդհանուր ճանապարհը:

Լաստանավով «Փոթից» Նովոռոսիյսկ մեկ բեռնատար մեքենայի փոխադրման արժեքը կազմում է 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Լրացուցիչ հարցերի դեպքում զանգահարել «Սպայկա» ընկերություն՝ 010 44470, 060 70444 կամ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ 055 541 968 հեռախոսահամարներով:

ՀԱՍՏՅՆՔԱՅԻՆ

ՊԵՏՔ Է ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԻ ԳՅՈՒՂԱՑԻ-ՇՈՒԿԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

«Այսօր ակնհայտ է, որ կառավարությունը գյուղացու կողքին է, աջակցում է սուբսիդավորված վառելիքի, սերմացուի և պարարտանյութի ձեռք բերման գործընթացում: Սակայն գյուղմթերքների իրացումը դեռևս հիմնական դիր է: Այսպեղ նույնպես գյուղացին պետական աջակցության կարիք ունի»,- ասում է Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ համայնքի ղեկավար Լևիկ Գրիգորյանը:



Նրա կարծիքով, Հայաստանում կարելի է այնքան որակյալ գյուղմթերքներ արտադրել, որ ներմուծումները հասցվեն նվազագույնի: «Տարեցտարի մեր երկրում արձանագրվում է ցանքատարածքների ավելացում, բնականաբար ավելանում է նաև արտադրված բերքը: Իրացման գործընթացի և գների կանոնակարգման անհրաժեշտություն կա», - նշում է գյուղապետը: Նրա կարծիքով, ցանքատարածքների ավելացումը նպաստում է նաև անասնապահության ճյուղերի զարգացմանը, քանի որ լուծվում է կերային մշակաբույսերի արտադրության խնդիրը: Իրացման շուկայի կարգավորումն առաջնահերթ խնդիրներից է: «Ուղղունելի է Երևանի տարբեր տարածքներում, կառավարության օժանդակությամբ, գյուղատնտեսական շուկաների կազմակերպումը, որտեղ գյուղացին, առանց միջնորդների, կարողանում է իրացնել իր արտադրանքը: Կուզենայինք, որպեսզի մասնագիտացված այդպիսի շուկաներ ստեղծվեն նաև անասնապահական

ՄԻԱՍԻՆ ՇԵՆԱՑՆԵՆՔ ԳԵՏԱՀՈՎԻՏԸ

Տավուշի մարզի Գետահովիտ համայնքը հայտնի է իր աշխատանքի ու հյուրասեր բնակիչներով, ովքեր հոգ են տանում իրենց ծնողների ու պապերի կողմից ավանդված բնաշխարհի հանդեպ: Գետահովիտ համայնքի երիտասարդ ղեկավար Արթուր Ղազարյանը ևս ոչ մի ջանք չի խնայում համայնքը շենացնելու համար: Նրա աշխատանքային գործունեության առաջին օրերի սկիզբը խոստումնալից էր: Ոռոգման հետ կապված խնդիր են լուծել:



«Ձորավար Անդրանիկի» տուն թանգարանի տնօրեն Իլյիչ Բեգլարյանը համայնքին չորի խողովարկներ է եկվորել: Արդեն սկսել են աշխատանքները. նոր ջրընդունիչ և ջրագիծ են անցկացրել: Հիմնական աշխատանքներն իրականացրել են «Հավի դոշ» կոլեկտիվի ակունքից, 4-րդ նոր ջրագիծ են կառուցում: Այս ամենը ներդրվում է համայնքի բյուջեից: Գյուղի սողանքային թաղամասում կատարվել են ջրահեռացման աշխատանքներ: Սողանքը դադարեցվել է: Սողանքի պատճառով մարդիկ վախից թողել էին իրենց տները, տարահանվել էին և ուրիշ տեղ էին բնակվում, բայց հիմա հետ են վերադարձել և հանգիստ ապրում են: Արդյո՞ք գյուղում խմելու ջուրը բավարարում է բոլորին, թե ոչ, համայնքի ղեկավարը նշեց, որ բնակիչների մոտ 80 %-ը 24 ժամյա խմելու ջուր ունի: Նոր ջրագիծ անցկացնելուց հետո ամիսներով գյուղն ապահովված կլինի ջրով:

Գետահովիտ համայնքը մարզական նվաճումներ ունի: Այս առումով ևս ներդրումներ ունեն: Գյուղի դպրոցին կից մասնաշենքում համայնքի բյուջեի միջոցներով մարզադահլիճ են կառուցել: Սպորտը զարգացել է գյուղում: Դպրոցի մարզադահլիճում գործում է կարատեի, ձեռք ուժի, ազատ ոճի, ըմբշամարտի խումբ: Արդեն ունեն չեմպիոններ: Մանկապարտեզում վերանորոգել ենք ճաշարանը, բաղնիքը: Ձեռուցման խնդիրը լուծել են թե մանկապարտեզի, թե գյուղապետարանի համար: Գյուղի փողոցային լուսավորության 60 տոկոսն արված է, մնացել է որոշ փողոցների լուսավորության ցանցի տեղադրումը: Շուտով դա էլ կավարտեն: Ներհամայնքային ճանապարհներ են վերանորոգվել, բայց դեռ անելիքներ կան: Հիմնական խնդիրը կենտրոնական փողոցի ասֆալտապատումն է: Հոյս ունեն, որ առաջիկայում կառավարությունն էլ կաջակցի, և գործն ավարտին կհասցնեն:

Ինչ վերաբերում է համայնքի վարելահողերի վիճակին, ապա գյուղապետը նշեց, որ համայնքն ունի 350 հա վարելահող, իսկ գյուղապետարանի ուժերով օգնել են ժողովրդին, որպեսզի կարողանան ցորեն ձեռք բերել: Երեք տարվա ընթացքում աշխատանքային ցանքատարածքները հասցրել են 100 հա-ի: Անելիքներ շատ են. միասին են շենացնելու հարազատ Գետահովիտը:

Գայանե Հապուխյան Տավուշի ԳԱՄԿ



ձորագյուղն ունի 4300 բնակիչ, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Գյուղում ստեղծված սպառողական կոոպերատիվի միջոցով լուծվել է տեխնիկայով ապահովվածության խնդիրը, այդպիսով՝ հեշտացվել են հողի մշակության և

հա վարելահողերից շուրջ 700-800 հա ցանվում է: Մնացած հողատարածքները դրվում են ցանքաշրջանառության տակ: Կարելի է ասել, լիարժեքորեն օգտագործվում են թե՛ վարելահողերը և թե՛ խոտհարքները: Սակայն պետք է կանոնակարգվի գյուղացի-շուկա փոխհարաբերությունը, ինչի արդյունքում մասշտիվ կլինեն նաև առաջարկվող գյուղմթերքների գները: Ի վերջո, երկիրը կերակրողը գյուղացին է, որի համար գյուղմթերքների իրացման նպաստավոր պայմաններ պետք է ստեղծվեն: Այլապես կունենանք այն ինչ արդեն ունենք»,- հավելում է Լևիկ Գրիգորյանը:

Նեկի Սահակյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԵՐԲ ՍԿՍՈՒՄ ԵՄ ՀԱՎԱՏԱԼ, ԴԱԴԱՐՈՒՄ ԵՄ ԹԵՐԱՀԱՎԱՏ
ԼԻՆԵԼՈՒՑ

«Կոոպերացիան մեզ համար դարձավ պահանջված ու անհրաժեշտ, քանի որ այն գյուղում դրական փոփոխությունների առիթ հանդիսացավ: Հուսով եմ, դրական նոր քայլեր կկատարվեն: Նախկինի համեմատությամբ, մենք հիմա մեծ առաջընթաց ունենք», - ասում է «Մադինա համայնքի արտոգտագործողների սպառողական կոոպերատիվ»-ի անդամ, ֆերմեր Արամայիս Սիմոնյանը:

Նկատելի է եկամուտների

գլուխ բուման ցլիկներ: Սակայն թե՛ մսի, և թե՛ կաթի իրացումը հիմնախնդիր է, քանի որ դրանց վաճառքն իրականացվում է միջնորդ-վերավաճառողների կողմից, իսկ գյուղացուն մնում է եկամտի փոքր մասը: «Մեզ մոտ թե՛ կարտոֆիլը, և թե՛ կաթնամթերքն ու միսը, աչքի են ընկնում համայնքի լավագույն հատկանիշներով: Ունենք բուսածածկով հարուստ արտոներ, համեղ և սառնորակ ջուր: Նույնիսկ արտավայրերում կենդանիներն օգտվում

և ժամանակին կազմակերպել կերակրումը, որպեսզի դրանք ոչ թե պարզապես գոյատևեն, այլ ապահովեն բարձր մթերատվություն: Մադինայի արտավայրերը փոքրածավալ են և չեն բավարարում առկա գլխաքանակի պահանջարկին: Գյուղապետ Վրեժ Սարգսյանը, պայմանագրային հիմունքներով, լրացուցիչ տարածքներ է վարձակալում հարևան գյուղերից, որպեսզի կենդանիների արածեցման հետ կապված խնդիրներ չունենան, և գյուղացին շահագրգռված լինի զարգացնել անասնաբուծությունը: «Շատ եմ կարևորում կոոպերատիվի հիմնումը մեր գյուղում՝ իր բոլոր հնարավորություններով: Մեր գերխնդիրն աշխատանքների ճիշտ կազմակերպումն է: Ես կոոպերացիայի դրական ազդեցությունը զգացել եմ անձամբ՝ իմ ընտանիքի կողմից վարած ֆերմերային տնտեսության օրինակով», - նշում է գյուղապետ Վրեժ Սարգսյանը:

«Մադինայի արտոգտագործողների սպառողական կոոպերատիվը» ստեղծվել է 2011 թ.-ին, անդամակցողների թիվը, որն առայժմ 130 է, գնալով ավելանում է: Պատճառն այն առավելություններն են, որոնք իր հետ բերում է կոոպերատիվը: Նշենք, որ կոոպերատիվի ձեռք բերած տեխնիկայով կատարվող ծառայությունները մատչելի են նաև կոոպերատիվին չանդամակցող գյուղացիների համար, չկան տարբերակված գներ: «Սկզբում թերահավատորեն էինք նայում կոոպերատիվ ստեղծելու առաջարկին, ներկայացվող ծրագրերն այնքան հարուստ ու բազմազան էին, որ կարծես թե դրանց իրականացումն անհավանական էր թվում: Սակայն տեխնիկայի ստացումից հետո ոգևորվեցինք: Գործնականում համոզվեցինք, որ կոոպերացիան անհրաժեշտություն է, իսկ առավելությունների մասին համոզվելուց հետո սկսեցինք հավատալ կոոպերատիվի հաջողություններին: Իսկ երբ սկսում ես հավատալ, դադարում ես թերահավատ լինելուց», - փաստում է գյուղապետը: Կոոպերատիվի նախագահ Սաթենիկ Սարգսյանը, ով նույնպես վարում է ֆերմերային տնտեսություն, ակտիվորեն համագործակցում է գյուղապետարանի հետ, և ներկայացված խնդիրներն անմիջապես լուծումներ են գտնում: Մադինայում, վերջին տվյալներով, 200 գլխով ավելացել է խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը՝ հասնելով 1200-ի: Կոոպերատիվի առաջին պտուղներն արդեն երևում են:



աճ, ինչը, ֆերմերի կարծիքով, կոոպերատիվի աշխատանքների ճիշտ կազմակերպման արդյունք է: «Անհատներն էլ ունեն գյուղատնտեսական տեխնիկա, կոոպերատիվն էլ: Բայց մենք աշխատում ենք օգտվել կոոպերատիվի ծառայությունից, քանի որ վերջինիս գները մատչելի են, կատարած աշխատանքները՝ որակով», - եզրահանգում է ֆերմերը: Այսպես՝ 1 հա խոտի հնձման գինը գեղջվել է ավելի քան 30 %-ով: Մատչելի գներով են իրականացվում նաև հողի մշակության հետ կապված մյուս ծառայությունները: Բացի այդ, ստացված ժամանակակից տեխնիկայի շնորհիվ, բոլոր աշխատանքները կատարվում են ժամանակին և անկորուստ: «Առավոտյան դիմում ես կոոպերատիվին՝ գյուղատնտեսական տեխնիկայով ծառայություններից օգտվելու խնդրանքով, մինչև կեսօր աշխատանքներն արդեն ավարտված են: Կոոպերատիվի անդամները միմյանց նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, պարտաճանաչ են՝ համատեղ աշխատանքների կատարման գործընթացում: Դրանից շահում է ընդհանուրի աշխատանքը», - նկատում է ֆերմերը: Արամայիս Սիմոնյանը զբաղվում է անասնապահությամբ, բուծում է 10 գլուխ խոշոր, 30 գլուխ մանր եղջերավոր անասուն: Նրա տեղեկացմամբ, գյուղում արտադրվում է մեծ քանակությամբ որակյալ միս, աճեցնում են շուրջ 400

են մաքուր, զույալ աղբյուրների ջրերից: Արդյունքում՝ այսպիսի գոտիներից ստացվում է որակյալ միս և կաթ: Ցանկալի է, որպեսզի մթերումները կազմակերպված բնույթ կրեն, և կոոպերատիվի անդամների արտադրած բերքն ու բարիքն անմիջապես իրացվեր», - նշում է Արամայիսը: Ցավոք, այսօր ոչ մի մթերող կազմակերպություն չի մտնում Մադինա: Գյուղացիները կաթը վերամշակում են տներում, ստանում են պանիր, կարագ և այլ կաթնամթերքներ, որոնք, չնայած բարձր որակին, դժվարությամբ են իրացվում: Տարածաշրջանում և հատկապես Մադինայում, զարգացած է նաև ոչխարաբուծությունը: Ցանկալի էր ոչխարի միս կամ կենդանի ոչխարներ արտահանել, սակայն դրա համար արտաքին կապեր և աջակցություն է անհրաժեշտ: «Մեր կոոպերատիվի հաջողությունն այսօր պայմանավորված է նաև համայնքապետի աշխատանքի ճիշտ և գրագետ կազմակերպումով: Չնայած երիտասարդ տարիքին՝ նա արդեն աշխատանքային մեծ փորձառություն ունի և կոոպերատիվի կայացմանը նպաստող ակտիվ գործունեություն է իրականացնում», - տեղեկացնում է ֆերմերը: Կոոպերատիվի անդամների կարծիքով՝ խնդիրը միայն անասնապահությանն ունենալը չէ: Պետք է ապահովել կենդանիների պահվածքի անհրաժեշտ պայմանները, ճիշտ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՆՊԱՍՏԵԼ Է ԿԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ

Տարիներ առաջ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքում կոոպերատիվի ստեղծումն անհրաժեշտ ու անհավանական կարող էր թվալ, քանի որ վարդաձորցիները միշտ չէ, որ հեշտությամբ են ընդունում արվող յուրաքանչյուր առաջարկ: Դարող, վերլուծող մարդիկ են վարդաձորցիները, առաջնորդվում են «Տասը չափիր՝ մեկ անգամ կորիր» սկզբունքով:

«Կոոպերացիան մեր գյուղում ճանապարհի հարթեց, կարելի է ասել, Վարդաձոր համայնքը մարզի առաջին գյուղերից է, որտեղ անմիջապես ձևավորվեց սպառողական կոոպերատիվ: Այն ստեղծվել է 2011 թ.-ին՝ 72 անդամով: Ներկայացված ծրագրերը հետաքրքիր են, գրավիչ: Գյուղապետարանն էլ անմիջապես աջակցեց կոոպերատիվի ստեղծմանը՝ ներդրումներ կատարելով: Դրան հաջորդեց հեռագնա արտավայրերում գյուղատնտեսական կենդանիների համար 3 խմոցների տեղադրումը», - պատմում է գյուղապետ Ռոբերտ Սիրականյանը: Կոոպերատիվն այժմ հազեցած է գյուղատնտեսական տեխնիկայով, ունեն 3 միավոր «Բելառուս» մակնիշի MT3 տրակտորներ, 1 միավոր խոտի մամիչ, 2 միավոր խոտհնձիչ, առաջիկայում կոոպերատիվին կհատկացվի ևս մեկական տրակտոր և շարքացան: «Նախկինում հին տեխնիկայով չէինք կարողանում ժամանակին կազմակերպել խոտի հավաքման աշխատանքները: Իսկ նոր տեխնիկայի շնորհիվ կարողանում ենք, բավականին սեղմ ժամկետներում, անկորուստ կատարել խոտի կուտակումը: Գյուղատնտեսության մեջ ժամանակի գործոնը մեծ նշանակություն ունի, ոչ մի աշխատանք չես կարող ուշացնել կամ հետաձգել: Ստացված տեխնիկայի շնորհիվ նույնիսկ ավելանում է կուտակված խոտի ծավալը: Մի խոսքով, արդեն ունենք կերի կայուն բազա, որն անասնապահական մթերքների արտադրության հիմքն է: Արդյունքում, մեր գյուղում տարեցտարի ավելանում է կաթի և մսի արտադրությունը», - նշում է գյուղապետը:



Վարդաձորում զգալիորեն ավելացել են ցանքատարածքները, նոր հողատարածքներ են մտել մշակության տակ: Հողերի համատեղ մշակության շնորհիվ, բարձրացել է բերքատվությունը, քանի որ ժամանակին են կատարվում բոլոր միջոցառումները: Կոոպերատիվը վարձակալում է նախկինում անմշակ մնացած հողատարածքները, վարում են, ցանում, իսկ ստացված բերքից էլ բաժին են հանում նաև հողատիրոջը: Նշենք, որ զգալիորեն ավելացել է նաև կոոպերատիվին անդամակցողների մոտ առկա անասնազխաքանակը, քանի որ ճյուղի զարգացման համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները: Կոոպերատիվի հաջողություններն ակնհայտ են, ինչի շնորհիվ անդամակցողների թիվն աստիճանաբար ավելանում է: Այժմ արդեն «Վարդաձոր համայնքի արտոգտագործողների սպառողական կոոպերատիվ» ունի 86 անդամ: «Սկզբնական շրջանում գյուղացիները չէին պատկերացնում, թե ինչ է կոոպերացիան, որն է դրա էությունը: Սակայն ընթացքում տեսնելով լայնածավալ այն աշխատանքները, որոնք իրականացվում էին վերջինիս կողմից՝ իրենք ևս միացան կոոպերատիվին: Ստեղծվել են բոլոր հնարավորությունները, որպեսզի անասնապահության հետ կապված խնդիրները լուծվեն առանց խոչընդոտի», - ասում է կոոպերատիվի նախագահ Ջոնիկ Սիրականյանը: Նա նույնպես վարում է անասնապահական ֆերմերային տնտեսություն, որտեղ խոշոր եղջերավորների գլխաքանակը հասնում է 120-ի, որից 50-ը՝ կթու կովեր են: Գյուղում կազմակերպվում են արհեստական սերմնավորման աշխատանքներ, ինչի շնորհիվ բարելավվել են կենդանիների տոհմային հատկանիշները, բարձրացել մթերատվությունը: Վարդաձորում կովերի տարեկան միջին կաթնատվությունը հասնում է 4000 լիտրի: Արտավայրերի ճիշտ և արդյունավետ օգտագործման նպատակով, կազմակերպվել է կենդանիների հերթափոխային արածեցում: Ի դեպ, գյուղում ստեղծվել է կաթի վերամշակման արտադրամաս, որտեղ վերամշակվում է կոոպերատիվի անդամների կողմից արտադրված կաթը: «ԳԾԻԳ» ա/հ-ի Գեղարքունիքի մարզային աջակցության թիմի համակարգող Խորեն Բադալյանի կարծիքով՝ «Վարդաձորի արտոգտագործողների սպառողական կոոպերատիվը» մարզի լավագույններից է, որն արդեն տնտեսական լուրջ առաջընթաց է արձանագրել: Կոոպերատիվն իր գործունեությամբ օրինակելիներից մեկն է, և պատրաստ է իր փորձը փոխանցել նաև նոր կայացող կոոպերատիվներին:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

«ՀՀ ՊՆ «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, հերթական անգամ այցելել էին ՀՀ ՊՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սև քարի անտառապահության» մասնաճյուղ: Այցելության նպատակն էր վերջին տարիներին, մոնիթորինգի կենտրոնում ներդրված ծրագրով, արբանյակային պատկերների համադրման արդյունքում ստացված անտառածածկ տարածքների փոփոխության պատճենների ուսումնասիրությունը:

Կենտրոնի աշխատակիցները հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, անտառատնտեսության աշխատակիցների, ինչպես նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխավոր անտառապետ Ռուբեն Պետրոսյանի հետ համատեղ, ընտրողական կարգով ուսումնասիրություն իրականացրեցին փոփոխված տարածքներից մեկում, որը գտնվում էր Գետաշենի անտառապետության 12-րդ քառակուսում:

Իրականացված դիտարկումներից պարզվեց, որ այդ տարածքում տեղ գտած փոփոխության պատճառը՝ նախորդ տարվա աշնանը տեղի ունեցած ուժեղ քամիների արդյունքում տապալված ծառերն են: Տեղում իրականացված քննարկումներից հետո պարզ դարձավ, որ նշված տարածքից փայտանյութի դուրս



բերմանը խոչընդոտում են անտառային ճանապարհների դժվար հասանելիությունը, տեղանքի ռելիեֆը, ինչի առիթով ցանկալի կլիմեր հրավիրել շահագրգիռ կողմերի ուշադրությունը՝ նշված հատվածներից փայտանյութի դուրս բերման համար արդյունավետ տար-



բերակաների մշակմանը:

Նշված հատվածներից փայտանյութի դուրս բերումը մասամբ կբավարարի տեղի բնակչության վաճառված սպառման ծավալները, ինչն իր հերթին կնպաստի անտառի վրա ճնշման նվազեցմանը: Դիտարկումներին մասնակցում էին նաև Կենտրոնում փորձաշրջան անցնող ուսանողները:

«Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾՎԵԼ Է ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Լոկատոր» ընկերությունը, ուսումնասիրելով աշխարհում տարածված բոլոր հակակարկարային համակարգերի առավելություններն ու թերությունները, ստեղծել է նոր սերնդի հակակարկարային համակարգ, որը թույլ կտա այլևս չմտադրվել հակակարկարային համակարգերի անսարքության, չկրակելու և անարդյունավետ աշխատելու մասին:

Համակարգը բաղկացած է ՀԱԳ-120 հակակարկարային կայաններից և կառավարվող ծրագրային ապահովումից: Համակարգի նորարարությունը կայանում է նրանում, որ հնարավոր է իրականացնել կայանների կոմպլեքսային կառավարում: Նմանատիպ կառավարման շնորհիվ կարելի է իրականացնել ցանկացած քանակով, ուժգնությամբ, ժամանակային ինտերվալներով կրակոցներ: Ծրագրային ապահովումը թույլ է տալիս քարտեզի վրա նշել կայանների խումբը, կրակոցների քանակը, ուժգնությունը, միջկրակային ժամանակն ու ակնթարթորեն գործածել դրանք: Հենց այս հատկությունն էլ է ապահովում բարձրացում է ամբողջ համակարգի արդյունավետությունը, քանի որ բոլոր կայաններն աշխատում են միասին և իրենց ազդեցությունն իրականացվում է ամպամածության ողջ տարածքով: Բացի կի-

րառական ֆունկցիաներից, ծրագրային ապահովումն ունի համառոտ մոնիթորինգային և անվտանգության համակարգեր, որոնց միջոցով կարելի է առցանց ռեժիմում տեսնել տարաբնույթ օգտակար տեղեկատվություն՝ գազի պաշարները, բալոններում ճնշումը, էլեկտրական մարտկոցների լիցքավորվածության չափը, արևային մարտկոցի վիճակը և այլն:

«Ծրագրային համակարգը լիովին մշակվել է «Լոկատոր» ընկերության կողմից և իր բնույթով չունի անալոգներ: Վերջին տարիներին, կարկտի դեմ պայքարի աշխատանքները ցույց են տվել, որ թեև առկա կայանների գործունեությունը որոշ չափով նվազեցնում է կարկտահարությունից հնարավոր վնասները, սակայն բավարար արդյունք չի ապահովում, ինչի պատճառով գյուղացիները կրում են զգալի վնասներ: Այս համակարգը ստեղծելիս, հաշվի ենք առել շուկայում առկա կայանների բոլոր թերի, բացասական կողմերը՝ լավագույն որակ ստանալու համար»,- նշում է «Լոկատոր» ընկերության տնօրեն Արման Խաչատրյանը:

Ներկայում հանրապետության տարածքում տեղադրված են հակակարկարային կայաններ, որոնք կառավարվում են մեկ տեսակի կապի միջոցով, չունեն առցանց մոնիթորինգի և կառավարման համակարգ, ինչի արդյունքում կարկտի դեմ պայքարն իրականացնում է անարդյունավետ: Կայանը կառավարում է GSM/GPRS ինտերնետային կապուղու և որպես պահուստային

կապուղի SMS կարճ հաղորդագրությունների միջոցով՝ միաժամանակ 2 տարբեր օպերատորների SIM քարտերով:

Նոր հակակարկարային կայանները՝ ՀԱԳ-ը, աշխատում են լիովին ավտոմատ ռեժիմում և ցանկացած անսարքություն առաջանալու դեպքում, ահազանգ են ուղարկում կենտրոնական կառավարման կենտրոն: Պաշտպանվող տարածքը 1 կայանի հաշվարկով կազմում է 120 հեկտար: Կայանը 5 վայրկյանը մեկ կարող է անընդմեջ կրակել ավելի քան 500 անգամ, հարվածային ալիքի արագությունը առնվազն 500մ/վ է: Կայանի կառավարման և սնուցման մասն առանձնացված է կրակող մասից, ինչը բացառում է ցնցումների և տատանումների բացասական ազդեցությունը դրանց վրա:

Հիշեցնենք, որ «Լոկատոր» ՓԲ ընկերությունը հիմնադրվել է 2007թ.: Իր իսկ կողմից նախագծված ծրագրային և քարտեզագրական հենքի շնորհիվ, ընկերությունը կարճ ժամանակահատվածում զբաղեցնում է առաջատար դիրքեր՝ շարժական օբյեկտների արբանյակային վերահսկողության ծառայությունների ոլորտում: Օգտագործելով կուտակված փորձն ու նորարարական գաղափարները՝ ներկայումս ընկերությունը ներկայացնում է մի շարք լուծումներ՝ երկրատեղեկատվական /GIS/, առցանց վերահսկողության և հեռահար կառավարման ոլորտներում:

www.realnews.am

ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական և հետազոտական գործունեության ձեռքբերումներն ու նվաճումները թվարկելիս անպայման շեշտվում է նաև բույսերի գենֆոնդի և սելեկցիայի պրոբլեմային լաբորատորիայի մասին՝ որպես հանրապետության մշակովի բույսերի և դրանց վայրի ազգակից տեղաձին (աբորիգեն) ներկայացուցիչների պահպանման, նորերի ստեղծման և արդյունավետ օգտագործման ուղղությամբ մեծածավալ ներուժ:

Լաբորատորիայի աշխատակիցները գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մելիքյանի ղեկավարությամբ, աշխատում են «Բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանում, գնահատում, օգտագործում և մոնիթորինգ GIS համակարգով» թեմայի վրա:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է մոնիթորինգ առավել հետաքրքրություն ներկայացնող մշակաբույսերի վայրի ցեղակիցների (ՄԿՏ) տարածման կարևորագույն արեալներում, խոցելիության և հարմարվողականության գնահատում՝ կախված մարդածին ազդեցությունից և կապված շրջակա միջավայրի վատթարացման և կլիմայի փոփոխության հետ: Դեպի Հայաստանի մարզեր բազմաթիվ արշավախմբային այցելությունների ընթացքում, ուսումնասիրությունների արդյունքում եղած սերմային հավաքածուն հարստացել է 71 նոր նմուշով, որից 30-ը դրվել է ex situ պահպանության: Իսկ ընդհանրապես լաբորատորիայում պահպանվում է 5453 սերմային նմուշ և շուրջ 1400 թերթ հերթարկում: Հացահատիկային և բանջարային մշակաբույսեր և նրանց վայրի ցեղակիցները, սելեկցիոն աշխատանքներում օգտագործելու միջոցով, ստացվել են աշնանացան գարու 3, ցորենաշրայի 1, սոխի 1 և սխտորի 1 սորտանմուշներ, որոնք հետևյալ

անուններով հանձնվել են պետական սորտափորձարկման՝ աշնանացան գարի՝ «Մարինա», աշնանացան գարի՝ «Յայկ 1», «Յայկ 2», աշնանացան ցորենաշրայ՝ «Սիս 2», սոխ՝ «Արմավիրի», սխտոր՝ «Ձյունիկ»:

Նոր հավաքված նմուշների տվյալները մուտքագրվել են միջազգային էլեկտրոնային տվյալների բազա (EURISCO): Շարունակվում է լաբորատորիայի սերտ համագործակցությունը Սվալբարդի միջազգային սերմերի բանկի (Svalbard Global Seed Vault, Նիդերլանդներ) հետ: Երկարատև և հուսալի պահպանության համար գենբանկ են ուղարկվել վայրի պտուղների (10), հացազգիների (7), դեղատու և արոմատիկ բույսերի (4), իսկ ընդհանուր թվով՝ 28 նմուշ:

Կատարվող ծրագրի շրջանակներում, 2015 թվականին լաբորատորիայի գիտաշխատողների կողմից, ՀԱԱՀ-ի Տեղեկագրում հրատարակվել է 6 գիտական հոդված: «Բույսերի գենետիկական ռեսուրսների վիճակը պարենի և գյուղատնտեսության համար» ծրագրի շրջանակներում, լաբորատորիայի աշխատակիցները շարունակում են համագործակցել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) հետ: Ընթացիկ տարում լաբորատորիան կավարտի «Բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանում, գնահատում, օգտագործում և մոնիթորինգ GIS համակարգով» ծրագրի կատարումը և կսկսի բույսերի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրմանն ու սելեկցիային ուղղված այլ ծրագրի իրականացումը:

www.anau.am



ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Ա. Հայրապետյանը, ուսուցանողներ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Տեր-Գրիգորյանի, կենսաբանական գիտությունների թեկնածուներ Ա. Գրիգորյանի և Լ. Աճեմյանի հետ այցելեցին Տավուշի մարզի Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն գյուղական խորհրդարվական ծառայություններին աջակցելու նպատակով:



Նրանց կազմակերպած ուսուցողական դասընթացը վերաբերում էր ագրարային խորհրդատվությանը, տեղեկատվության և գիտելիքահենք տնտեսության կառավարմանը: Նյութերի կարևորությունը բավականին պահանջված էր մարզի տնտեսություններում, ուստի խորհրդատուների կողմից ընդունվեցին մեծ հետաքրքրությամբ՝ ծրագիրը շարունակական դարձնելու պատրաստակամությամբ: Թեմաները բազմաբնույթ էին՝ «Մերձարևադարձային մշակաբույսերի՝ թզենու, նոնենու, արքայանարնջենու հիմնական վնասատուների և հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարի միջոցառումներ», «Մշակաբույսերի վնասատուները, հիվանդությունների կանխատեսումն ու ահազանգումը», «Պատվաստակալների և սածիլների աճեցում, բազմացում, արտադրության կազմակերպում՝ ժամանակակից ջերմատնային տնտեսություններում» և «Բանջարանոցային մշակաբույսերի սածիլների աճեցումը»:

Միջոցառման աշխատանքները համակարգում էր ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Արշալույս Հայրապետյանը: ԳԱՀԿ-ի տնօրեն Վահան Կարապետյանն ուսուցման ընթացքում խորհրդատուների ձեռք բերած գիտելիքների կարևորությունը բարձր գնահատեց և հորդորեց դրանք ավելացնել ունեցած գիտելիքներին և տարածել ֆերմերային տնտեսություններում:

Օրերս Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի և Տավուշի ԳԱՀԿ-ի համատեղ սեմինարը Իջևանի տարածաշրջանի Դիպավան և Գանձաքար համայնքներում էր: Սեմինարին մասնակցում էին նաև ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Արշալույս Հայրապետյանը և Տավուշի ԳԱՀԿ-ի տնօրեն Վահան Կարապետյանը: Երկու համայնքներում էլ անասնապահներ, այգեգործներ և բանջարաբույծներ էին հավաքվել սեմինար - քննարկումից ակնկալելով իրենց մրահոգող խնդիրների պատասխանները:



Դիտավանը, որտեղ առավել զերակշռող էին ջերմատնային տնտեսությունները՝ շուրջ 20 ֆերմերներին գոհացրեց «Բանջարանոցային մշակաբույսերի սածիլների աճեցումը» թեմայով սեմինար-դասընթացը, որը վարում էր գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը: Ներկայացվեց որակյալ սածիլների աճեցման և ապրանքային բերքի ստացման կարևորության, ինչպես նաև հիվանդություններից պաշտպանվելու նախապայմանների մասին: Մասնագետն այցելեց երիտասարդ ֆերմերներից մեկի տնտեսություն և տեղում հետաքրքիր և ուսանելի ցուցումներ տվեց: Վերջում մասնակիցներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին ուսուցանողին՝ ստանալով սպառիչ պատասխանները:

Մասնագետն այցելեց երիտասարդ ֆերմերներից մեկի տնտեսություն և տեղում հետաքրքիր և ուսանելի ցուցումներ տվեց: Վերջում մասնակիցներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին ուսուցանողին՝ ստանալով սպառիչ պատասխանները: Դիտավան և Գանձաքար համայնքներում մասնագետները սեմինարի ավարտին այցելեցին ֆերմերների տնտեսություն և համապատասխան ցուցումներ տվեցին ֆերմերներին: Սեմինարը օգտակար էր և արդյունավետ:

Հաջորդ սեմինարը, որը Գանձաքար համայնքում էր, վերաբերում էր անասնապահությանը: Թեման Գյուղատնտեսական կենդանիների մատուցիչ հիվանդություններին էր վերաբերում:

Տաթևիկ Նազինյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՌԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ

Գորիսի անասնաշուկայում մեկնարկել է դպրոցականների համար ամառային դասընթաց՝ գյուղատնտեսության կառավարման և անասնապահության վարման ժամանակակից մեթոդների վերաբերյալ:



Դասընթացը կազմակերպվել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) հասարակական կազմակերպության «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակում: Դասընթացի նպատակն է՝ Սյունիքի մարզի գյուղական համայնքների երիտասարդ սերնդի մոտ ցանկություն արթնացնել զբաղվելու գյուղատնտեսությամբ, վաղ հասակից զարգացնել երեխաների գիտելիքները և ծանոթացնել անասնապահության վարման արդի մեթոդներին և միջոցներին:

Ամառային դասընթացը մեկնարկել է հունիսի 9-ին և կշարունակվի շուրջ մեկ ամիս: Այդ ընթացքում Գորիսի և Սիսիանի շրջանների շուրջ 50 համայնքների 13-15 տարեկան դպրոցականները, տեսական և ինտերակտիվ գործնական պարապմունքների արդյունքում, կծանոթանան անասնապահության վարման արդի մեթոդներին, անասնաշուկայի աշխատանքներին և ագրովաճառակետում ներկայացված ժամանակակից տեխնիկային:

«Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրը մեկնարկել է 2014թ. սեպտեմբերին՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի (ՇՀՀԳ) ֆինանսավորմամբ: Ծրագիրը նպատակ ունի նպաստել Սյունիքի և Վայոց ձորի մարզերում անասնապահության ոլորտում ներգրավված ֆերմերների եկամուտների աճին և տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԴԱՍԱՆՈՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Օրերս ՀԱՀ Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի ամբիոնի դասախոսական կազմը՝ ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վարդան Ալեքսանյանի ղեկավարությամբ, այցելեցին Կոտայքի մարզ:

Այցելության նպատակն էր՝ խորացնել ամբիոնի դասախոսների գործնական և կիրառական գիտելիքները, ինչպես նաև տեսնել, թե մարզում գործող գյուղատնտեսական և սննդադրույունաբերական կազմակերպություններում ինչպիսին են նյութատեխնիկական ապահովվածության վիճակը և արդիական ու նորագույն տեխնոլոգիաների կիրառման մակարդակը: Խումբն այցելեց «Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ, որտեղ դասախոսների հարցերին հանգամանալից պատասխանեցին կազմակերպության ղեկավարն ու մասնագետները: Գործարանի համար խիստ հատկանշական է, որ նրանց ամբողջ արտադրանքն իրացվում է արտաքին շուկաներում, մասնավորապես ՌԴ-ում: Այնուհետև նրանք այցելեցին Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող, հանրապետությունում ելակի արտադրությամբ զբաղվող ամենախոշոր ջերմատնային տնտեսություն՝ «Կլուբինյան պոլյանա» ՍՊԸ: ԱՀԷ ամբիոնի անդամները գործնական հանդիպում ունեցան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Միքե Եղիազարյանի, Նոր Գեղի գյուղապետ Ֆ. Թևոսյանի և «Կլուբինյան պոլյանա» ՍՊԸ-ի ղեկավարության հետ: Այն այսօր ոչ միայն հանրապետության, այլև տարածաշրջանի բարձրակարգ ջերմատնային տնտեսություններից է, որտեղ բարձր մակարդակի վրա են գտնվում արտադրական, տեխնոլոգիական և կազմակերպչական ու շուկայավարման հարցերը:

Հաջորդ կանգառը՝ նույն վարչական տարածքում գտնվող, լուրջ և վարունգ արտադրող ջերմատնային տնտեսությունն էր, որի տնօրեն պրն Ղազարյանը ջերմորեն դիմավորեց այցելուներին, նրանց ծանոթացրեց ջերմատնային տնտեսության արտադրական գործընթացներին: Ավարտելով այցելությունները՝ Վ. Ալեքսանյանը շնորհակալություն հայտնեց մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին՝ ցուցաբերած աջակցության և արդյունավետ ու բովանդակային այցելություններ կազմակերպելու համար:

www.anau.am

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀՆԴԿԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնդկացորենը (լատ.՝ *Fagopyrum*) հնդկացորենազգիների ընտանիքին պարզ-կանոն բույսերի ցեղ է: Միամյա և բազմամյա խոտաբույսեր են՝ նման մարիպոեղ ցեղին, բայց ծաղկապարզ չի մեծանում: Տեսակներից են հնդկացորեն մշակովի (*F.esculentum*): Ծաղկաբույսերը ծոցային են, ծաղիկները երկսեռ են, փարբերասունակ, հոտավետ: Առէջները 8-ն են, վարսանդն ունի 3 տոնակ: Պտուղը թուփ է, սերմը՝ օսլային:

Հնդկացորենի հայրենիքը Հիմալայան լեռների արևմտյան հարթավայրերն են, որտեղ մշակում են ավելի քան չորս հազարամյակ, իսկ պատմական Հայաստանում այս մշակաբույսը մշակել են կես հազարամյակ ավելի ուշ:

Հայաստանի համար հնդկացորենը համարվում է բարձրարժեք ձավարային, ոչ ավանդական մշակաբույս: Հաշվի առնելով այս մշակաբույսի նկատմամբ մեծ պահանջարկը շուկայում և սննդի արդյունաբերության մեջ, ինչպես նաև տնտեսական և կենսաբանական արժեքավոր հատկանիշները՝ վերջին մի քանի տարիների ընթացքում գնալով աճել է ֆերմերային տնտեսությունների հետքերը հնդկացորենի նկատմամբ:

Հնդկացորենը կարևոր դիետիկ մշակաբույս է: Պարունակում է մեծ քանակությամբ սպիտակուցներ, օսլա, ճարպ, հանքային տարրերից՝ երկաթ, ֆոսֆոր, B₁, B₂ վիտամիններ և այդ պատճառով դասվում է արժեքավոր սննդամթերքների շարքին: Բուժիչ նպատակներով մթերում են բույսի ցողունի գազաթնային մասը՝ ծաղկման շրջանում: Պարունակվող միկրոտարրերի բազմազանության շնորհիվ հնդկացորենն օգտակար է շաքարային դիաբետի, պանկրեատիտի, խափափ դեպքում: Նպաստում է խոլեստերինի մակարդակի կարգավորմանը:

Հնդկացորենի հատիկի վերամշակման ժամանակ առաջացած թեփը և մնացորդները պարունակում են բավականին շատ սպիտակուցներ, ճարպեր և լավ կեր են խոզերի ու թռչունների համար: Հնդկացորենի 1 կգ ծղուղը պարունակում է 0.30 կերամիավոր և 23 գ մարսելի պրոտեին, խոտը համապատասխանաբար 0.46 կերամիավոր և 47 գ մարսելի պրոտեին: Հնդկացորենի ծաղիկները հարուստ են նեկտարով և լավ մեղրատու են: Հնդկացորենի դաշտի յուրաքանչյուր հեկտարից ստացվում է 200-400 կգ մեղր:

Հնդկացորենի վեգետացիայի տևողությունը 70-85 օր է, որի հետևանքով մշակաբույսը հաջողությամբ մշակվում է նախալեռնային և լեռնային շրջաններում:

Հնդկացորենի մշակության գործում կարևոր դեր են խաղում ագրոկլիմայական գործոնները: Հնդկացորենի աճի ու զարգացման համար ակտիվ ջերմաստիճանների գումարը պետք է լինի 1300-1600 °C: Հնդկացորենը ցրտահարվում է -2 - (-2.5) °C-ի պայմաններում:

Բույսը պահանջկոտ է նախորդների նկատմամբ: Լավագույն նախորդներ են բազմամյա բակլազգի խոտաբույսերը, հատիկալնդեղենները, շարահերկ մշակաբույսերը, ցելից հետո մշակվող հացահատիկները: Ցանքի լավագույն ժամկետը հու-

լիսի երրորդ տասնօրյակն է:

Նախորդ մշակաբույսի բերքահավաքից հետո անհրաժեշտ է կատարել խոզանի երեսվար և հետո նախագութանիկավոր գութանով՝ խորը վար: Վաղ գարնանը, խոնավությունը պահպանելու նպատակով, պետք է կատարել փխրեցում:

Հնդկացորենը շատ զգայուն է պարարտանյութերի նկատմամբ, հատկապես լավ է օգտագործում ֆոսֆորական ալյուրը. որը 90-135 կգ/հա նորմայով հողի տակ պետք է տալ խորը վարի ժամանակ: Ազոտական պարարտանյութերով նպատակահարմար է պարարտացնել կամ ցանքի կամ սնուցման ժամանակ:

Ցանվող սերմացուն պետք է լինի խոշոր, ծանր: Որպեսզի սերմերը համերաշխ ծլեն, անհրաժեշտ է ցանքից առաջ դրանք ենթարկել օդաջերմային տաքացման: Սերմանյութը պետք է ախտահանել Դիլիդենտ կամ Ռաքսիլ պատրաստուկներով՝ 2լ/տ կամ 0.4 լ/տ չափաբաժնով: Ցանքի նորման լայնաշար ցանքի դեպքում տատանվում է 40-60 կգ/հա-ի սահմաններում, իսկ սովորական շարքերով ցանելու դեպքում՝ 80-100 կգ/հա: Ցանքը պետք է կատարել այն ժամանակ, երբ հողի ջերմությունը 8-10 սմ խորության վրա կազմում է 12-15°C: Հնդկացորենի ուշահաս սորտերը ցանում են լայնաշարք՝ 45-60 սմ, իսկ վաղահասները՝ սովորական շարքերով՝ 15 սմ միջշարքային տարածությամբ, 4-6 սմ խորությամբ: Թեթև ու չոր հողերում ցանքը տափանում են: Ծիլը երևալուց անմիջապես հետո միջշարային տարածությունները պետք է փխրեցնել 8-10 սմ խորությամբ:

Ցանքից անմիջապես հետո դաշտը պետք է սրսկել ամինային աղով՝ 1.2-1.5 լ/հա նորմայով: Սրսկում պետք է կատարել մինչև հնդկացորենի ծիլերի երևալը և անմիջապես փոխել:

Ոռոգումը նպատակահարմար է կատարել ակունքերով: Ակունի խորությունը պետք է լինի 12-15 սմ: Շատ ավելի լավ է, երբ ոռոգումը կատարում են գիշերը: Վեգետացիայի ընթացքում պետք է ջրել 5-6 անգամ: Առաջին ջրումը կատարել կրկնակաման, երկրորդը՝ ծաղկման փուլում առաջին ջրումից 15-17 օր հետո, երրորդ ջրումը՝ երկրորդից 17-19 օր հետո, հաջորդ ջրումները կատարել՝ ըստ պահանջի:

Հնդկացորենի բերքահավաքը կատարում են, երբ հատիկի 75 %-ը գորշ գույն է ստանում: Միջին բերքատվությունը կազմում է 17-19 գ/հա:

Հնդկացորենի ներդրումն ու ցանքատարածությունների ընդարձակումը կնպաստի գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը և հանրապետության պարենային անվտանգության խնդրի լուծմանը:

Ռոլանդ Ղազարյան
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու,
Երկրագործության գիտական կենտրոն



ՍԻՆԴՐԻԿ ԿԱՄ ՍՈՂՈՄՈՆԻ ԿՆԻՔ

Ծներեկազգիների ընտանիքին պատկանող, 15-45 սմ բարձրության, բազմամյա խոտաբույս է՝ հաստ կոճղարմատով: Ունի հերթադիր, ձվաձև տարած և տերևներ, երկսեռ ծաղիկներ: Պտուղը սև կամ կապտավուն հատապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիս, պտղակալում՝ հունիս-օգոստոս ամիսներին: Մեր հանրապետությունում աճում են՝ օղակատերև, հարթ, բազմածաղկավոր և կովկասյան սինդրիկները: Այս տեսակները լայնորեն տարածված են խառն անտառներում, ալպյան և ենթալպյան գոտիներում, 1500-2200 մ բարձրության վրա, գլխավորապես Իջևանի, Դիլիջանի, Ստեփանավանի, Կիրովականի, Հրազդանի, Գորիսի, Մեղրու և այլ շրջաններում: Բոլոր տեսակներն էլ ունեն թե՛ բուժական, և թե՛ սննդային նշանակություն: Սինդրիկը բազմանում է սերմերով և կոճղարմատով՝ հաճախ տալով լայնատարած բուսուտներ: Ձմեռում է լավ, պտղակալում՝ ոչ ամեն տարի:

ները՝ ծաղկման ընթացքում, իսկ կոճղարմատն՝ աշնան ամիսներին: Հունքը պահում են չորացրած կամ կոնսերվացրած վիճակում: Սինդրիկը ժողովրդական բժշկության մեջ կիրառման բավականաչափ հին պատմություն ունի: Հնդկաստանում բույսի կոճղարմատը ճանաչել են որպես մածո, փափկացնող և տոնուսավորող միջոց: Տիբեթում կոճղարմատից պատրաստում են դեղամիջոց՝ ծերունական գառա-



ված կոճղարմատն ու տերևները դնում են թարախապալարների վրա:

Մասնագետների կարծիքով դեղաբույսն օգտագործվում է Հայաստանում որպես կերակուր, միաժամանակ այն շատ օգտակար է ստամոքսին և ներքին օրգաններին, իսկ նրա թուրմն ունի դեմքն արևահարությունից պաշտպանելու հատկություն: Սակայն բույսի սերմերը, մասամբ նաև մյուս մասերը, թունավոր են: Արածելու ընթացքում պատահմամբ ուտելով՝ կենդանիները թունավորվում են, որի հետևանքով առաջ է գալիս սրտի աշխատանքի թուլացում, շնչառության դանդաղում, հաճախամիզություն, փորլուծություն և այլն:

Դեղաբույսն օժտված է հակամիկրոբային ակտիվությամբ:

ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Կոճղարմատից ջրաթուրմ պատրաստելու համար 1 թեյի գդալ հումքը 30 րոպե թրմում են 1 բաժակ եռման ջրում, ապա ըմպում օրվա մեջ 3 անգամ:

Կոճղարմատից եփուկ պատրաստելու համար 40-50 գ մանրացրած հումքը 30 րոպե եփում են 0,5 լ ջրում, ապա օգտագործում թրջոցների ձևով:

ԱՅՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սինդրիկը բնակչությանը ծանոթ կերաբույս է: Մատղաշ ընձուղները խաշում են ու օգտագործում քացախով, տապակում կամ պահածոացնում են ձմեռվա համար: Այն ունի հաճելի փխրածակաբեր համ ու հոտ: Կոճղարմատի փոշին՝ շնորհիվ լորձառատության, առաջարկվում է օգտագործել որպես սոսիս:

Բույսը նեկտարատու է, շնորհիվ գեղեցիկ տեսքի, ունի նաև դեկորատիվ նշանակություն:

մուղյան դեմ:

Ռուսական ժողովրդական բժշկության մեջ դեղաբույսի բոլոր մասերն օգտագործում են ռևմատիզմի, ճողվածքների, թուրքի և գոտկացավերի, իսկ Իտալիայում՝ պոլիարթրիտների ժամանակ: Սիբիրում կոճղարմատի եփուկը պատրաստում են կաթով և օգտագործում բարձր ջերմության, ռևմատիզմի և կատաղած շների կծելու դեպքերում:

Հայկական ժողովրդական բժշկության մեջ տրոր-

ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բույսի գրեթե բոլոր մասերում հայտնաբերված են ալկալոիդներ, սապոնիններ, հովտաշուշանի գլիկոզիդներից՝ կոնվալարին, մինչև 330 մգ % C վիտամին, տանին, բուսական լորձ և օսլա:

ԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բուժման նպատակով հիմնականում օգտագործում են բույսի կոճղարմատը, տերևները և դալար ցողունը:

Վերջինս հիմնականում ուտելու նպատակով հավաքում են ապրիլ-մայիս ամիսներին, տերև-

ՀԵՏԱԲԵՐՔԻՐ Է...

Ամեն ինչ մեղրի մասին

Մեղրի բույրն ու համը պայմանավորված են բույսերի նեկտարով: Նեկտարաբարու բույսերի սակավության դեպքում մեղուները մշակում են ցողամեղր (մանանայի մեղր), որը հավաքում են որոշ ծառերի՝ կաղնու, կեչու, բարդու, լորենու փրեններից: Այս դեպքում մեղրն ունի պակաս դուրեկան համ և ցածր սննդալից արժեք: Նեկտարը քաղոց, բուրունավեր հեղուկ է: Նեկտարը պարունակում է 50-75 % ջուր, 20-24 % միաշաքար (մոնոսախարիդ), 13-24 % շաքարեղեգ, հանքային նյութեր, սպիրտակուցներ, էթերային յուղեր, վիտամիններ: Մեղուները այցելում են այնպիսի ծաղկաբույսերի, որոնց նեկտարը առանձնանում է շաքարի բարձր պարունակությամբ:

ցատրում էր նրանով, որ ինքը պարբերաբար օգտագործել է մեղր, իսկ փիլիսոփա Դեմոկրիտը այնուամենայն էլ, որ առողջությունը պահպանելու և ներքին օրգանների հիվանդություններից խուսափելու համար պետք է մեղր գործածել:



Մ.թ.ա. 3000 թ. գրավոր հուշարձանները վկայում են այն մասին, որ Եգիպտոսում լավ զարգացած է եղել մեղվաբուծությունը: Որոշ եգիպտացիներ բարձր էին գնահատում մեղրն ու մեղուներին, դրա մասին վկայում է հռոմեական դարաշրջանների խորհրդանշանները: Արաբական բժշկության մեջ հայտնի ներկայացուցիչ Ավիցենան խորհուրդ էր տալիս մեղրը օգտագործել որպես դեղ սննդի մեջ: Մեղվաբուծությունն առավել զարգացման է հասնում քրիստոնեության տարածման ժամանակաշրջանում: Այդ ժամանակներում սկսվեց մեղրամոմի օգտագործումը կրոնական արարողությունների ընթացքում:

Մեղրը օգտագործում էին սննդի մեջ և խմիչքների պատրաստման համար, իսկ մեղրամոմը՝ լուսավորման և կրոնական կարիքների համար: Ժամանակակից մեղվաբուծության մեջ մեծ ներդրում

է արել ռուս մեղվաբույծ Պ.Ի. Պրոկոպովիչը (1775-1850 թթ.), որը 1814 թ. ստեղծեց քանդվող շրջանակներով փեթակ: Ամերիկացի մեղվաբույծ Լարենցո Լորեն Լանգստրոտը 1851 թ. ստեղծեց առաջին փեթակը շարժական շրջանակներով: Ներկայումս մեղվաբուծությունը աշխարհում հասել է գերազանց արդյունքների՝ շնորհիվ գիտության արագ զարգացման: Այսպես, մեղվաբուծությունը մեզ տնտեսական նշանակություն ունի այգեգործության զարգացման գործում: Փոշոտման շնորհիվ, որը իրականանում է մեղուների օգնությամբ, ապահովվում է տասնյակ անգամ ավելի շատ և որակյալ բերքի ստացում:

ՄԵՂՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1. Կանխարգելում է քաղցկեղը և սրտանոթային հիվանդությունները՝ շնորհիվ իր բաղադրության մեջ մտնող ֆլավոնոիդների ու հակաօքսիդանտների:
2. Վերջին հետազոտությունները բացահայտել են, որ մեղրը բարերար ազդեցություն է ունենում խոցերի ու աղեստամոքսային այլ հիվանդությունների բուժման դեպքում:
3. Ունի հակաբակտերիալ, հակասնկային ազդեցություն, քանի որ մեղուները մեղր պատրաստելիս ավելացնում են էնզիմներ, որոնք արտադրում են հիդրոգենի պերօքսիդ:
4. Խթանում է մարզական պատրաստվածությունը: Ժամանակին օլիմպիական մարզիկները մեղր ու չորացրած թուզ էին ուտում՝ իրենց ֆիզիկական վիճակը բարելավելու համար: Սա հաստատվել է ժամանակակից բժշկության կողմից, քանի որ մեղրը հիմնախի հավասարակշռում է գլիկոգենի մակարդակը:

5. Օգնում է հազի ու կրկորդի մրսաժության դեպքում. 100-ից ավելի երեխաների հետ անցկացրած ուսումնասիրությունից պարզվել է, որ մեկ գրալ մեղրը գրեթե նույնքան արդյունավետ է հազի անցկացման ու խաղաղ քնի ապահովման հարցում, որքան հազը բուժող օշարակի մեկ չափաբաժինը:

6. Մեղրն օգնում է տեսողության բարելավմանը, քաշի նվազեցմանը, բրոնխիալ ասթմայի, փորլուծության և սրտխառնոցի դեպքում: Այն անվանում են նաև Յոգահավի, քանի որ կարողանում է թափանցել մարմնի հյուսվածքների ամենախորին շերտերը:

7. Չնայած այն հանգամանքին, որ մեղրը պարունակում է պարզ շաքարներ, դա նույն շաքարը չէ, ինչ շաքարավազի կամ դրա փոխարինիչների մեջ պարունակվողը: Գլյուկոզայի ու ֆրուկտոզայի հրաշալի համադրության արդյունքում մեղրը, փաստորեն, օգնում է օրգանիզմին կարգավորել շաքարի մակարդակը արյան մեջ:

8. Մեղրում պարունակվող պարզ շաքարներն ունեն չորացնող ազդեցություն, իսկ հակաբակտերիալ բնույթի շնորհիվ մեղրը նաև նպաստում է վերքերի մեջ տարատեսակ վնասակար օրգանիզմների թափանցման կանխարգելմանը:

9. Մեղրի որոշ տեսակներ պարունակում են վեց տեսակի լակտոբակտերիաներ և չորս տեսակի բիֆիդոբակտերիաներ, որոնք անգնահատելի աշխատանք են տանում աղեստամոքսային համակարգի համար:

10. Տնային պայմաններում կարելի է պատրաստել բազմաթիվ դիմակներ՝ պարտադիր ներառելով մեղրը, որը խոնավացնում, սնուցում է, հակաբակտերիալ ազդեցության շնորհիվ, մաքրում է մաշկը:

Լիլիթ ԳԱՄՊԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Շինարարական աշխատանքներ

Մրցույթի ծածկագիր՝ CARD-/HO/16/01 06 հուլիսի, 2016թ.

- 1. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD) հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Ազատության պողոտա 1/21 հասցեում գտնվող շենքի դիմացի հենապատի վերականգման և տարածքի բարեկարգման համար (շինարարական մրցույթ (CARD-/HO/16/01)):
2. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD) հրավիրում է բոլոր իրավասու շինարարական կազմակերպություններին՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Ազատության պողոտա 1/21 հասցեում գտնվող շենքի դիմացի հենապատի վերականգման և տարածքի բարեկարգման շինարարական (CARD-/HO/16/01) մրցույթին:
3. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն կազմակերպությունները, որոնք վերջին 2 տարվա շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը ոչ պակաս է, քան՝ 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որոնք ունեն վերջին 3 տարիների ընթացքում, տարեկան կտրվածքով, առնվազն 3000 մ² բետոնային աշխատանքներ, ունենա 4-րդ կարգի ռիսկայնության կառույցների շինարարության փորձ:
4. Մրցութային փաթեթները կարելի է ձեռք բերել CARD-ի ներկայիս գրասենյակից՝ մինչև 2016 թ. հուլիսի 13-ը, ժամը 16:00, հետևյալ հասցեով՝ ՀՀ Երևան, Ազատության 1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550:
5. Շահագրգիռ կազմակերպությունները մրցութային փաթեթները ստանալու համար պետք է ներկայացնեն շինարարական աշխատանքների կատարման համապատասխան արտոնագրերի պատճենները և պետ ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն:
6. Հայտերը պետք է ուժի մեջ մնան բացման օրվանից՝ 60 օրվա ընթացքում և ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ մինչև 2016թ. հուլիսի 19-ը, ժամը 12:00, հետևյալ հասցեով՝ ՀՀ Երևան, Ազատության 1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550:
7. Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2016թ. հուլիսի 19-ին, ժամը 16:00-ին «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի գրասենյակում՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

Հարգելի քաղաքացիներ, Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:



Հ ա ն ր ա գ ի տ ա - րաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկի-նիստ» գրասենյակում:

ԳՅՈՒԼԱՆՎՈՒՄ Է 2016 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈՒՐԱՏՈՒ» թերթ 1 համարի գինը՝ 120 դրամ 6 ամսվանը՝ 1980 դրամ 1 տարվանը՝ 3960 դրամ
«ԱԳՐՈՒԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր 1 համարի գինը՝ 1350 դրամ 6 ամսվանը՝ 4050 դրամ 1 տարվանը՝ 8100 դրամ
Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատոտաշ»
կազմակերպությունները

ԱԳՐԱԼՐԱՏՈՒԹՅՈՒՆ
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության (նախարարություն) «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 ՄՕ00226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 52
ստորագրված է տպագրության 04.07.2016 թ.
տպագրվում է Գ-ԱՎ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա